Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2024-2025 ուստարի)

11-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է Սյունիքի մելիքների աջակցությամբ Անգեղակոթ գյուղում հրավիրվել գաղտնի խորհրդակցություն. 0,5 մ.
   ա/ 1696 թ. բ/ 1698 թ. գ/ 1699 թ. դ/ 1701 թ.
2. Ո՞ւմ գլխավորությամբ է Մադրասում ստեղծվել հայրենասիրական խմբակ. 0,5 մ.
   ա/ Հովսեփ Արղության բ/ Մովսես Բաղրամյան
   գ/ Հովսեփ Էմին դ/ Շահամիր Շահամիրյան
3. Որտե՞ղ է կնքվել Ռուսաստանի և Վրաստանի միջև դաշնագիրը. 0,5 մ.
   ա/ Աստրախան բ/ Գեորգիևսկ գ/ Թիֆլիս դ/ Մոսկվա
4. Ո՞վ էր 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Կովկասյան կորպուսի հրամանատարը.
   ա/ Մ. Լոռիս-Մելիքով բ/ Վ. Բեհբութով 0,5 մ.
   գ/ Ա. Տեր-Ղուկասով դ/ Վ. Մադաթով
5. Ե՞րբ է Իսրայել Օրին գնացել Ռուսաստան և Պետրոս 1-ին ներկայացրել Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու իր ծրագիրը. 0,5 մ.
   ա/ 1698 թ. բ/ 1700 թ. գ/ 1701 թ. դ/ 1703 թ.
6. Ըստ 1910 թ. տվյալների՝ որքա՞ն էր Երևանի բնակչության թվաքանակը. 0,5 մ.
   ա/ 42 հազար բ/ 35 հազար գ/ 32 հազար դ/ 30 հազար
7. Ո՞ր քաղաքում է հիմնադրվել Հնչակյան կուսակցությունը. 0,5 մ.
   ա/ Ժնև բ/ Մարսել գ/ Թիֆլիս դ/ Վան
8. Ե՞րբ է Դաշնակցության կողմից հիմնադրվել «Խարիսխ» զինագործարանը. 0,5 մ.
   ա/ 1890 թ. բ/ 1891 թ. գ/ 1892 թ. դ/ 1894 թ.
9. Ե՞րբ է նահատակվել Քրիստափոր Միքայելյանը (նշե՛լ տարեթիվը, ամիսը, ամսաթիվը): 0,5 մ.
10. 1878 թ. Բեռլինի պայմանագրով ռուսական զորքերի գրաված ո՞ր տարածքներն էին վերադարձվում Օսմանյան կայսրությանը: 0,5 մ.
11. Ո՞վ էր առանձնանում 19-րդ դարի կեսերի պոլսահայ ազատականների շարքում որպես երգիծական ժանրի նշանավոր ներկայացուցիչ և «Մեղու» հանդեսի խմբագիր: 0,5 մ.
12. Որքա՞ն հայ է բռնագաղթեցվել 1604 թ. շահ Աբասի կողմից տեղահանության հետևանքով: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա/ Պարսից շահի կողմից Դավիթ բեկի իշխանության ճանաչումն ու դաշինքի կնքումը
    բ/ Իսրայել Օրու մահը
    գ/ Խամսայի մելիքությունների առանձնացումը Գանձակի խանությունից
    դ/ Նադիրի հռչակվելը Պարսկաստանի շահ
    ե/ Եղվարդի ճակատամարտը պարսկական և օսմանյան զորքերի միջև
    զ/ «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի հրատարակումը Մադրասում
    է/ Հովսեփ Էմինի և Հերակլ 2-րդի կողմից խրախուսական նամակներ ուղարկելը Մշո Ս.Կարապետ վանքի վանահայր Հովնանին
    ը/ Հովսեփ Էմինի վերադարձը Հայաստան և հանգրվանելը Գետաշենում
    թ/ Հովսեփ Էմինի վեջնական վերադարձը Հնդկաստան

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Հովհաննես Դրասխանակերտցի
2. Վարդան Արևելցի
3. Ստեփանոս Օրբելյան
4. Մատթեոս Ուռհայեցի
5. Սմբատ Գունդստաբլ
6. Մխիթար Հերացի

ա.«Տիեզերական պատմություն»
բ.«Պատմություն նահանգին Սիսական»
գ.«Ժամանակագրություն»
դ.«Ջերմանց մխիթարություն»
ե.«Տարեգիրք»
զ.«Պատմություն Հայոց»

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Տեղափոխվելով Գերմանիա՝ Իսրայել Օրին հաստատվում է Պֆալց երկրամասի կենտրոն Լայպցիգ քաղաքում, որտեղ հանդիպում է կայսրընտիր իշխան Հովհան Վիլհելմին:
բ/ 18-րդ դարի սկզբին Ռուսաստանը պայքար էր սկսել ինչպես Բալթիկ, այնպես էլ Սև և Կասպից ծովերի ափերին հաստատվելու համար:
գ/ 1723 թ. հունիսին թուրքական բանակը գրավում է Թիֆլիսը և շարժվում դեպի Գանձակ, Հերակլ 2-րդը հեռանում է Ռուսաստան:
դ/ Անդրկովկասի և Պարսկաստանի համար Ռուսաստանի և Թուրքիայի պայքարը վերաճել է կարճատև պատերազմի, որն ավարտվել է 1724 թ. Կ.Պոլսում կնքված պայմանագրով:
ե/ 1729 թ. սկզբին Ավան և Թարխան հարյուրապետների գլխավորությամբ պատվիրակություն է ուղարկվել Կասպից ծովի ափերին հաստատված ռուսական բանակ՝ օգնական զորք ստանալու խնդրանքով:
զ/ Օգնություն չստանալով՝ Ավան և Թարխան հարյուրապետների գլխավորած հայկական պատվիրակությունը վերադարձել է Արցախ:
է/ 1786 թ. «Նոր տետրակը» թարգմանվել է ռուսերեն և լույս տեսել Մոսկվայում 2000 տպաքանակով:
ը/ Շարունակելով «Նոր տետրակի» գաղափարները՝ Մադրասի խմբակի անդամները կազմում և 1776 թ. հրատարակում են «Որոգայթ փառաց» գիրքը:
թ/ Հայկական պետականությունը վերականգնելու՝ Շահամիր Շահամիրյանի կազմած նախագծով Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Կիլիկյան Հայաստանի քաղաքները կառավարում էին թագավորի նշանակած հատուկ պաշտոնյաները՝ շահապները:
բ/ Կիլիկիայի գործակալությունների մեջ ազդեցիկ դեր ուներ արքունի քարտուղարությունը, որի գլխավոր պաշտոնյան կոչվում էր սենեսկալ:
գ/ Խնամակալության գործակալը Կիլիկիայում կոչվում էր պայլ. նա թագավորի առաջին խորհրդականն էր, իսկ արքայի բացակայության դեպքում փոխարինում էր նրան:
դ/ Կիլիկյան Հայաստանում շրջանառության մեջ էին նաև բյուզանդական օրենքները՝ ասիզներ անվանումով:
ե/ Իտալիայի ամենախոշոր գաղութը Վենետիկ քաղաքում էր. այստեղ ժամանող հայ վաճառականներն ունեին իրենց կենտրոնատեղին՝ «Հայոց տունը»:
զ/ Հայդուկները (արաբերեն՝ տասնապետ) Արևելյան Հայաստանում կռվող ժողովրդական վրիժառուներն էին:

է/ 1895 թ. սեպտեմբերի 18-ին հնչակյանները Կ.Պոլսում կազմակերպել են 4-հազարանոց խաղաղ ցույց. նրանք շարժվել են դեպի կառավարության նստավայրը՝ Գում Գափու:
ը/ 1895 թ. մայիսի 11-ին սուլթանին հանձնվել է Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, համաձայն որի հայկական վեց նահանգներում՝ Կարին, Վան, Բիթլիս, Խարբերդ, Մալաթիա և Սեբաստիա, սուլթանի կողմից նահանգապետեր պիտի հաստատվեին միայն տեղական բնակչության համար ցանկալի անձինք՝ առանց ազգային ու կրոնական խտրականության:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ 1826 թ. սեպտեմբերի 3-ին հայազգի գեներալ Վալերիան Մադաթովի 2-հազարանոց զորագունդը Շամքոր գետի ափին ջախջախում է պարսիկների 10-հազարանոց բանակը և գրավում Գանձակը:
բ/ 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում կնքված ռուս-թուրքական հաշտության պայմանագրով Ռուսական կայսրությանն են անցնում Անդրկովկասի սևծովյան առափնյա շրջանները՝ Փոթի նավահանգստով, Ախալցխան և Ախալքալակը:
գ/ 1849 թ. հիմնվում է Երևանի նահանգը՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Նախիջևան, Նոր Բայազետ, Լոռի և Օրդուբադ գավառներով:
դ/ 1878 թ. փետրվարի 19-ին կնքվել է ռուս-թուրքական հաշտությունը Կ.Պոլսից ոչ հեռու գտնվող Սան-Ստեֆանո ծովափնյա ավանում՝ հայ մեծահարուստ Մանուկ բեյ Միրզայանի ամառանոցում:
ե/ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով Բարձր դուռը պարտավորվում էր Արևմտյան Հայաստանում ռուսների գրաված և կրկին Թուրքիային վերադարձվելիք գավառներում անհապաղ բարեփոխումներ անցկացնել և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից:
զ/ Հայ քաղաքական մտքի պատմության մեջ հնչակյաններն առաջինն են եղել, որ Հայկական հարցի լուծումը համարել են ամբողջական հայրենիքում հայկական անկախ պետության վերաստեղծումը:
է/ 1892 թ. սեպտեմբերին «Դրոշակ» թռուցիկ թերթի անդրանիկ համարում հրապարակած հռչակագրով Դաշնակցությունն Արևմտյան Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատագրությունն ազդարարել է իր գլխավոր խնդիրը:
ը/ Թուրքական իշխանությունների կողմից 1885 թ. Վանից վտարված Մկրտիչ Փորթուգալյանը հաստատվում է Ֆրանսիայի Մարսել քաղաքում, որտեղ հրատարակում է «Արմենիա» թերթը:
թ/ Հեղափոխականների շրջանում մեծ հարգանք վայելող Մկրտիչ Ավետիսյանը 1885 թ. աշնանը Վան քաղաքում գաղտնիության պայմաններում հիմնադրում է հայ ազգային առաջին կուսակցությունը:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (սխալը գտնելը՝ 0,5 մ., ուղղումը՝ 0,5 մ.)
Երուսաղեմը մահմեդականներից հետ գրավելու համար 1189 թ. սկսվել է խաչակրաց չորրորդ արշավանքը:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
«Յուրաքանչյուր հայ ընտանիք թող իրենից ներկայացնի առանձին հայ դպրոց»:
ա. Ո՞ր փաստաթղթից է կատարված մեջբերումը:
բ. Ո՞ր կազմակերպությունն է այն տարածել:
գ. Ինչի՞ն է հետևել փաստաթղթի հրատարակումը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Խեթական ո՞ր արքան է մայրաքաղաքը փոխադրել Խաթթուսաս. 0,5 մ.
   ա/ Խաթթուսիլիս 1-ին բ/ Լաբարնա 1-ին գ/ Մուրսիլիս 1-ին դ/ Սուպիլուլիումաս 1-ին
2. Պարսից ո՞ր արքան է գրավել Ստորին Եգիպտոսը. 0,5 մ.
   ա/ Քսերքսես 1-ին բ/ Դարեհ 1-ին գ/ Կյուրոս 2-րդ դ/ Կամբիզ
3. Ե՞րբ են խաչակիրները գրավել Կոստանդնուպոլիսը. 0,5 մ.
   ա/ 1198 թ. բ/ 1199 թ. գ/ 1202 թ. դ/ 1204 թ.
4. Ո՞ր իշխանի օրոք է քրիստոնեությունը Ռուսիայում հռչակվել պաշտոնական կրոն. 0,5 մ.
   ա/ Օլեգ բ/ Վլադիմիր գ/ Սվյատոսլավ դ/ Յարոսլավ Իմաստուն
5. Ինչպե՞ս էին կալվինականներին անվանում Ֆրանսիայում: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

   1. Նիկոլո Մաքիավելի 2. Ռաֆայել Սանտի
   3. Թոմաս Մոր 4. Ֆրենսիս Բեկոն
   ա.«Սիքստինյան Տիրամայրը» բ.«Ուտոպիա»
   գ.«Նոր օրգանոն» դ.«Տիրակալը»

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

   ա/ Ֆիլիպ 4-րդը 1302 թ. հրավիրել է Գլխավոր շտատներ, որտեղ ներկայացված էին երեք դասեր՝ ազնվականներ, քաղաքացիներ, գյուղացիներ:
   բ/ Դասային ներկայացուցչական միապետություն առաջացել է նաև Իսպանիայում, ներկայացուցչական մարմինը կոչվում էր Սեյմ:
   գ/ Մեծ իշխան Յարոսլավ Իմաստունը (1019-1054 թթ.) ստեղծել է ռուսական առաջին գրավոր օրենսգիրքը՝ «Ռուսկայա պրավդա»-ն:
   դ/ 1380 թ. վերջնականապես տապալվել է Ոսկե հորդայի տիրապետությունը Ռուսաստանում:
   ե/ 1814 թ. կնքվել է քառակողմ (Ռուսաստան, Ֆրանսիա, Ավստրիա, Պրուսիա) պայմանագիր, որը հիմք է դրել Եվրոպայի միջազգային հարաբերությունների նոր համակարգին:
   զ/ 1899-1902 թթ. տեղի է ունեցել անգլո-բուրական պատերազմ. բնիկ աֆրիկացիները պատերազմին մասնակցում էին բուրերի կողմից:
   է/ 1911-1912 թթ. պատերազմելով Օսմանյան տերության դեմ՝ Իտալիան նրանից զավթել է Տրիպոլիտանիան և Կիրենաիկան. այդ տարածքում ստեղծվել է Լիբիա գաղութը:
   ը/ 1917 թ. հոկտեմբերի 25-ին Պետրոգրադում իր աշխատանքներն սկսել է բանվորների և զինվորների Խորհուրդների 2-րդ համագումարը, որը հռչակել է իշխանության անցումը խորհուրդներին:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

10.02.2025 թ.